

ՂԱՐԱԲԱՂ ՓԱՍՏԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԵՅՈՒԹԵՐՈՎ)

1918—1920 թթ. Անդրկովկասի, մասնավորապես նաև Արցախի, պարբերական մամուլը հարուստ է նախատի տեղեկություններով և հաղորդել տեղական կարևոր իրադարձությունները, հատկապես հայ-ազգային կյանքի, հարաբերությունների, հարաբերական հարաբերությունները, որոնք ժամանակին հեռավորացան հայ հասարակությանը և օպերատիվ կերպով լուսարարեցին Արցախի կյանքը, նրա բնակչության հոգսերը, հայ աշխատավորների ձեռքարկները ու ակնկալությունները:

Քերթնում չհաղորդում են, օրինակ, որ 1917 թվականի վերջերից սկսված Ղարաբաղը ընդհանրապես և Շուշիի մասնավորապես գտնվում էին թուրքերի պաշարման օկուպի մեջ, վերջիններս ամեն կերպ շարունակում էին Ղարաբաղը ենթարկել իրենց, բռնություն տակ պահել նրա հայությանը: Այդ վտանգը չեն զրթացնելու նպատակով Ղարաբաղում ստեղծվում է 7 հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որի առաջին պարտականությունն է գտնում հրավիրել Արցախի հայության համագումար և քննարկել ստեղծված իրավիճակը, գտնել փրկության ելքը: Այդ համագումարը, իրոք, հրավիրվում է Սակայն, ինչպես նշում է «Մշակը» 1919 թ. փետրվարի 22-ի համարում, հաջով էր այդ համաժողովը ավարտել իր նիստերը, երբ հուլիսի 26—28-ին սկսվում են ընդհարումները հայերի և թուրքերի միջև, Ղարաբաղ գյուղի մոտ: 2500 հայ զաղթականներ կամենում են Չանգեզուրի գավառից անցնել Շուշի, սակայն թուրքերը թիկն չուր կողմող վարում կտրում են նրանց ճանապարհը և արգելում մտնել Շուշի: Քերթնում միաժամանակ հայտնում է, որ այդ ժամանակ հայերը գինեված չէին և ամենևին էլ ներպատակ չունեին ընդհարվել թուրքերի հետ: Միջադեպը, սակայն, ստիպում է սթափվել, և ահա հայերը կարողանում են պաշտպանական նկատառումներով գինեված խմբեր ստեղծել Դիզակում (այժմ՝ Հաղարթ), Վարանդայում (այժմ՝ Մարտունի), Խաչնուսում (այժմ՝ Ստեփանակերտ), Ջրաբերդում (այժմ՝ Մարտակերտ) և բուն Շուշիում:

Գավառում ստեղծված իրավիճակը մեղմելու, հայ-ազգային կյանքի հարաբերությունները կանոնավորելու նպատակով 1919 թ. սեպտեմբերի 6-ին հրավիրվում է Ղարաբաղի հայության երկրորդ համագումարը:

«Համագումարի բացումից երկու օր անաջ,— գրում է «Մշակը» 1919 թ. փետրվարի 22-ի համարում,— բուրձնաբերական հարստության անհավասար կյանքի մեծ հայկական գյուղը: Ղարաբաղյան հարցը դառնում է երկրորդ համագումարի ճիմական հարցը: Համագումարը որոշում է դիմել տեղական բուրձնի, որ Երանց միջոցով հնարավորություն ստեղծվեն ղարաբաղցիներին հետ գառնալու իրենց գյուղը: Թուրքերը հրաժարվել են աշակերտություն ցույց տալ, պատճառաբանելով, քե այդ հնարավոր չէ ռազմական տեսանկյունից»:

Հետզհետե վատանում է Ղարա-

բաղի վիճակը: Ստիպված մի պատվիրակություն է ուղարկվում՝ թուրքական երկրորդ դիվիզիայի հրամանատար Ջեմալի Ջահիդ բեկի հետ բանակցելու: Վերջինս, հայերի նկատմամբ տրամադրված լինելով խիստ թշնամաբար, թույլ չի տալիս սլատվիրակության անդամներին որևէ մեկին խոսելու և տեղ-նուտեղը ինքն է մի քանի կետից բաղկացած պահանջներ առաջարկում: Ահա դրանք.

1. Հպատակվել Ադրբեջանի կառավարությանը:
 2. Զինաթափ լինել:
 3. Թուրքական զորքին ճանապարհ տալ դեպի Շուշի:
- Անակնկալի եկած հայ պատվիրակները շվարած իրար են նայում: Բայց ամենից անսպասելի առջևում էր դնում Ջահիդ բեկը հայ պատվիրակներին թույլ չի տալիս Շուշի վերադառնալու: Ուրիշ ելք չուկար, մնում էր գումարել Ղարաբաղի հայությանը երրորդ համագումարը, որը բացվեց սեպտեմբերի 17-ին: Համագումարի բացումից երկու օր անց, 1919 թ. սեպտեմբերի 19-ին, նուրի փաշայի գլխավորությամբ թուրքական զորքը նոր հարձակման է պատրաստվում՝ նպատակ ունենալով առաջին հերթին զինաթափ անել հայերին: Եվ դա մասնակիորեն հաջողվում է նրան: Հանկարծակի բերելով դիրքապահ հայ գյուղացիներին, արյունարբու փաշան իրար հետևից գրավում է Ասկերանի շրջակա գյուղերը: Սեպտեմբերի 26-ին 4000 թուրք զինվորներ մտնում են Շուշի: Այդ առևտուրով «Մշակը» հաղորդում է հետևյալը. «Թուրքերի տիրապետությունը Շուշիում ստեղծում է գերզավեալին բաղադրականություն: Երեխաների կախաղան են բաժնացնում: Շուշիի քեև անձնատուր՝ եղավ՝ գավառը՝ Կիզակը, Վարանդան, Ջրաբերդը ռաֆի կանգնեցին: Վարանդայի Մամա գյուղի մոտ հայ ռազմիկները Սակրատ-Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ հազարավանդ թուրքական 300 հազար բաղկացած վաշտի վրա, բարդեցին այն, խլեցին զենքը:

Ջրաբերդում բուրձնաբերական գիները երեխանց անցան Մարտակերտը և երեխանց էլ ստիպված եղան հետ ճանապարհը: Կիզակում Արտեմ Վալայանի ռազմիկները բայլ շավցին, որ գավառ ռաֆ կախի քեկուզ և մեկ բուրձնաբերական: Ղարաբաղի հայ ժողովուրդը, նրա ղեկավար գործիչները ամեն ինչ անում էին, որպեսզի տերիտորիալ և քաղաքական հարցերը լուծվեն ոչ թե գժտությունների, զենքի ուժով, այլ բանակցությունների, խաղաղ ճանապարհով: Մամուլի օրգանները, հատկապես «Մշակը», «Արցախը» այդ հարցերը դնում էին իրական փաստերի տրամաբանությամբ, բացեիքաց ցույց տալով, որ Ադրբեջանը իրավունք չուկի որևէ տերիտորիալ ակնկալություն ունենալ:

«Մշակի» 1919 թ. մարտի 4-ի, 1920 թ. օգոստոսի 13-ի համարներում «Ինչու է Ադրբեջանը աչք դրել Ղարաբաղի վրա», «Ինչ է Ադրբեջանը» վերնագրերով հոդվածներում նշված էր, որ ազգրբեջանցիները ոչ մի իրավունք չունեն պահանջներ ներկայացնելու հայկական Արցախի նկատմամբ: «Ադրբեջանը չունի անցյալ այն իմաստով, ինչպես հասկացվում է պատմության մեջ,— գրում է «Մշակը».— Ադրբեջանը ճակի իրեն երկիր չի եղել տեղագրական-աշխարհագրական տեսանկյունից մի ուրույն առանձնաճանաչվող հողատարածք: Նույնը կարելի է ասել և երկրում ապրող ազգաբնակչության մասին: Բեկի բարբառոզավոր իր ազգային, էթնիկական կողմնակց ոչ մի բնույթ, իրեն հատուկ ազգագրի չունի, իր նիստ ու կացով, կրթությամբ, իրեն հատուկ անհատական կազմով: Պարսկաստանի ժողովուրդը:

Ադրբեջանը չի ունեցել պատմություն, կուլտուրա, պետական անցյալ և պետական մտածել: Քանի որ չի եղել անկախ պետություն, չի էլ կարող ունենալ աշխարհագրական սահմաններ: Որտեղ էին սկսվում Երա սահմանները ու որտեղ վերջանում, ոչ ոք չգիտեր և չի էլ կարող գիտեցել: Մինչև առասպելական տիրապետությունը Ադրբեջանը կազմում էր Արևելյան Պարսկաստանի մի մասը»:

Հողովածի հեղինակը զարմացած է, թե ինչ իրավունքով է Ադրբեջանը ձգտում տիրանալ Ղարաբաղին, Չանգեզուրին, Նախիջևանին և այլ երկրամասերի:

Նույն միտքն է արտահայտում «Արցախ» քաղաքական, հասարակական և դրական շարաքաթերթի 1919 թ. մարտի 23-ի համարի առաջին էջում գետնեղած «Ղարաբաղի հայ ժողովուրդին» կողմ, որն սկսվում է այսպիսով. «Ադրբեջանական կառավարությունը ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով՝ իր բարբ է մեկնել Ղարաբաղի հայության կենտրոնի» Շուշի: Մտա մեկ ամիս անաջ զենքուր և ճանաչված արհեստագործական պաշտանով ուղարկվել էր Խոսրով-բեկ Սուլթանովը: Եւ իր նմանները ամեն կերպ ձգտում էին ստանձանել Ղարաբաղի հայության պատկեր ու արժանապատիվությունը: Նրանք ոչ մի կերպ չէին համաձայնվում այն մտքին, որ հայկական Ղարաբաղը պատմական Արցախը, երբեք չի ենթարկվելու Ադրբեջանին: Ամեն կերպ պիտի աշխատել, որ Ադրբեջանը չկարողանա ստանձանել Ղարաբաղի հայության անկախությունը»:

1919 թ. հունվարից Շուշիում լույս տեսնող «Նոր կյանք» շաբաթաթերթը առանձին էջերով է նվիրում այն հարցին, թե ինչպես Արևելյան Անդրկովկասի մահմադականությունը, հենվելով տաճականության ուժի վրա, անցյալ տարվա (այսինքն՝ 1918 թ.) մայիսի վերջին իրեն անկախ հայտարարեց:

Այդ անկախությունը նա կապեց Գանձակի և Բարձի Կահանգների հետ՝ ստալով նրանց Ադրբեջանյան անունը, Նա առանց հապաղելու սկսեց վարչապետությունների և խժգործությունների միջոցով ձգտել իրեն միացնելու Չանգեզուրի և Ղարաբաղի շուրջ 300 հազար հայ ազգաբնակչությանը՝ հակառակ վերջինիս ցանկությունը: «Ռուսների պահանջները խմբագրական հոդվածում շեշտում է, որ «այդ գավառների հայությունը իրենից վանեց այդ նոր բուրձնային և զենքի անհավասար ռազմական պայմանները քե տաճիկ բանակի դեմ, որ եկել էր Ադրբեջանի գաղափարները բեկի ուժով իրագործելու, և քե ներառեց Ադրբեջանի հարցաների դեմ»:

«Նոր կյանքը» գրում է, որ նման վիճակը, ստեղծված անարխիան վերացնելու համար անհրաժեշտ է ժողովրդի կամքն ու նրա ցանկություններն արտահայտող մի կազմակերպություն, որ համախմբված լինեն ազնիվ ու տոկոսն մարդիկ, «Ղարաբաղի գյուղացին շափտի բավականաճախ այն տգիտության դեմ պայքար մղելով,— նշում է գավառական պարբերականը,— նա պիտի կարողանա իր առձեռն կյանքը կուլտուրական ճանապարհով կարգավորելու: Նա պիտի ճանաչեց գա ոչ միայն իրեն կուլտուր, այլև քուտեղծող»:

1918—1920 թթ. գավառում շարունակվում են բռնությունները, մյուս կողմից էլ մղվեցնում են սովի, հիվանդությունների: Դրանց զուգընթաց քաղաքական կյանքն էլ չէր մտնում նորմալ հունի մեջ: Ղարաբաղում համար ստեղծված անկանոնի դրությունը, սակայն, չէր կարող ընկնել նրա ազատարար ռաֆին, մարտական ավյունը, հպարտությունը: Եվ միանգամայն իրավացի էր «Մշակը», 1919 թ. մարտի 19-ի համարում գրելով, որ հայ գյուղացին և քաղաքացին չեն կարող հաշտվել բռնությունների հետ, որ իրականացնում է Ադրբեջանի կառավարությունը: Երկուսով այս ամենից, «Մշակը» աներկբաբարեք շեշտեց. «Հայկական Ղարաբաղը փաստագրացույց տվեց ամբողջ աշխարհին, որ չի ճանաչի և չի ճանաչում Ադրբեջանի կառավարության իշխանությունը իր երկրամասի վրա, ինչպես այդ մտա ժամանակներս օրոշեց Ղարաբաղի հայության համագումարը» («Մշակ», 19 մարտի 19 թ.): «Աղանցեցը հայ զորիներին» թղթակցություն մեջ թերթը մեկ առ մեկ շեշտում է, որ Ադրբեջանի կառավարության մեղքով կոտորածներ են տեղի ունենում ոչ միայն Բարձում, այլև Շամախիում, Գյուլիսայում և այլ գավառներում:

«Մշակը» կանգ է առնում մոլեգնած թուրք ազգաբնակչության այն խժգործությունների լուսարարման վրա, որոնք ուղղված էին մի շարք շրջաններում ապրող հայերի դեմ: Քերթնում է.

«Մեր խոսքը այսօր հայ գերիների մասին է, Երանց մասին, օվեր չեն կարողացել փախչել (խոսքը կոտորածներից փրկվելու մասին է— Ս. Ա.), մեացել են երկրի մեջ խուսի-խուսի ցրված մահմեդական գյուղերի մեջ: Մրանց չեն կոտորել, սրանք գերիներ են, սրանք ապրելու իրավունք են ըստացել սոսկալի պայմաններով: Կարված են դուր աշխարհից, ոչ մի հայ երբեք չի կարող տեսնել Երանց, քանի որ ոչ մի հայ չի համարձակվի օտև դեն մահմեդական գյուղի մեջ» («Մշակ», 7 մարտի 1920 թ.):

Ղարաբաղի զենեթու-Կահանգապետ Սուլթանովը, որը ոչ մի իրավունք չունի իր լիազորությունները տարածելու գավառի հայության վրա, հորջորում էր, թե Ղարաբաղը «կազմում է վերջնականապես Ադրբեջանի տերիտորիայի անբաժան մասը», թե այդ նպատակի համար նա կուլված է դիմել ամեն միջոցի, ընդհուպ մինչև հայերի զինաթափումը և երկրանց վերնումը երկրամասից: Եվ նա ամեն կերպ ահաբեկում էր հայերին, ցինկիկարա բացականչելով. «Մինչև ամբողջ Ղարաբաղը ծնկի չընթան, չեն ճանաչատեսա...»: Ասենք նաև, որ լկտի գեներալ-նահանգապետը արյան ծարավի էր: Դրա նոր վկայությունը գործան Խանթեղի և Աղղամի կոտորածները: Ավելի ողբերգական դրություն մեջ էր Շուշին, Քերթնում հայտնում է, որ Աղղամում ուղղակի ողբերգություն է մի կողմից կոտորածն ու տեսեսական անկանոնի վիճակը, մյուս կողմից սաստիկ տարածված տիֆն ու սովը: Այժմեղ Քերթնում ուղղակի նշում է, որ ոչ ոք չի մտածում պարենային գործի կազմակերպման մասին: Մարդիկ օրական ստանալ զոհեր են տալիս զուտ սոված լինելու պատճառով:

Թուրքական վանդալները չէին բավարարվում մարդկային կոտորածներով, Շուշիի և մի շարք գյուղերի հրկիզումներով: Ներանց գաղափարների վերաբերմունքն ակնհայտ է դառնում նաև դարբում հայերի կողմից պատրաստված կոթողների ունեցումով, «Նոր կյանքը» հայտնում է, որ թուրքերը Ամարասի սուրբ Գրիգորի վանքը ավերել ու թալանել են նեթարկել և շարունակում են նույն վանդալիզմը մյուսների նկատմամբ:

Եվ հիմա, 70 տարի հետո՝ Սուլթանովի ողբերգությունը, կոտորածն ու շարղերը, հայերի նկատմամբ տածվող թշնամական վերաբերմունքը Բարձում, Շամախիում, Շուշիում, Գաթնասանում, Կիրովաբաղում, Մինգեչաուրում և Ադրբեջանի մյուս հայաբնակ վայրերում...

Մնում է հուսալ, որ ժամանակը մեծ ուժ կունենա իր արժանի գնահատականը տալու 1988 թ. փետրվարյան իրադարձություններին, Սուլթանովի ողբերգությունը, որպեսզի այնևս ոչ մի ժամանակ և ոչ մի տեղ այնևս չկրկնվեն: Կորսված արդարությունը պիտի վերականգնվի: Եվ դրանում իր վճռական խոսքն ասաց ՀեՍԸ Գերագույն խորհուրդն իր վերջին որոշումով: Առաջին քայլն արված է:

Ս. ԱՎԱԳՅԱՆ

Քանապարտական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր